

## ՍՏԵՂԾԻՉ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ամեն մի սպանություն է նողկալի, իսկ մտավորականի սպանությունը մակդիր չունի: Թուրք բարձրաստիճան պաշտոնյաները հայ մտավորականների սպանության սկզբան գործ հանձնարարում էին, կարծեմ, ոչ իրենց պաշտոնակիցներին և նույնիսկ ոչ իրենց ազգակիցներին:

Տգեղ, շատ տգեղ, նողկալի բան եղավ, ավելի նողկալին դժվար է պատկերացնել: Որևէ տնօրենի, որևէ նախարարի, որևէ ունկորի սպանությունը ինչ-որ տրամաբանության տրվում է, - սպանում են, որպեսզի իրենցով զբաղեցնեն նրանց տեղերը, - սա մտքի ու անգամ սև երևակայության սահմաններում չտեղավորվող սպանություն է, սա զառանցանք է: Իրենցով են լցնելու այն տեղը, որ կոչվում էր Վարդգես Պետրոսյան: Այդպիսի կարգավիճակ չկար, ինչպես են լցնելու, այդպիսի տեղ չկար: Նա ինքն էր տեղ ու պաշտոն ու գործ: Թե՞ նպատակը հենց այդ խիզախ, շարժուն, սրափ, անընկճելի մարդուն, որ ամեն օր ու ամենուր կարողանում էր գործ ստեղծել ու «Վարդգես Պետրոսյան» կնքել, այդ եզակի գործին վերացնելու է եղել: Սա արդեն համահանրապետական, համազգային հասարակական-քաղաքական մեր կյանքի բացահայտ կողոպուտն է, սա բաց մարտահրավեր է մեր գոյության բուն իհմքին:

Եվս մի երկու այսպիսի խոլ թխկոց՝ և մեր ժամանակի կափարիչը կմեխսվի անժամանակ, և ծեր մեջ այլս սրափ մտքի մարդ չեք ունենա:

Դեռ հազար տարի առաջ մեր պատմիչը, լսածով, հիշատակել է առասպելների հեռավորարևելյան մի երկիր, որի բնակիչները հարազատներով հավաքվում ու իրենց հանգուցյալ ավագի գլուխը ուտում են: Տարօրինակը, զառանցայինը, բնազանցականը այն էր լինելու, որ ավագները խժուեն կրտսերներին, դա ցեղի ինքնառչնչացում կնշանակեր, և արժեր՝ որ այդպիսի ցեղը վերանար ու չլիներ, բայց մեզ համար անբարոյական ու անմարդկային է և այս: Հայ մարդու մեր ընկալման առաջ և այս է մղձավանջային, անկախ այն բանից, թե իրենց կարծիքով ինչից են ազատվել մարդասպանները կամ ինչի են տիրացել:

Ազատվել են նրա սրափեցնող ներկայությունից: Տիրացել են մի հրապարակի, որի կարգադրիչը հիմա արդեն խելագարությունն է:

Իրենք թերևս իրոք ազատվել են, իսկ մենք ահա զրկվել ենք ավագի նրա վստահ, գոնե արտաքուստ անխոռվ, ստեղծիչ ներկայությունից:

Եվս մի քանի դավադիր թխկոց՝ և ծանոթ երկրի նշանները կվերանան, և սա հայրենիք չի թվա և սա հայրենիք չի լինի: Սա կլինի մեզ օտար, խորթ, այլև թշնամի, հեռավորարևելյան առասպելների մի տարածք, որի մասին որպես ոչ զավակներ, այլ օտարներ, ոչ լսածով, այլ տեսածով կվկայեն, թե այնտեղ վանել էին բանականությունը և նրանց առաջնորդը տենդագին խուճապն էր:

Ափսոս, իր «Երկիր Նախրին» հույս էր տալիս, թե վերադարձել է Երիտասարդ տարիների Վարդգեսը և Եզակիորեն իրեն հայտնի միջոցներով մեր օրը դարձյալ լցնելու է նույն անչար չարությամբ, նույն խնդուն խանդով, տան որդու նորոգիչ անհանգստությամբ ու տանտիրոջ չափավոր պահպանողականությամբ:

Ափսոս, հեռացավ այս տարածքն ու այս ժամանակը ստուգապես մերայինացնող վաղածանոթ, մտերիմ նշաններից ևս մեկը: